<u>Գրության նախագիծ</u>

«Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ
նախագահ **Շուշան Դոյդոյանին**

Հարգելի տիկին Դոյդոյան

Ի պատասխան Ձեր 05.11.2021թ. հ.412041 դիմումի՝ հայտնում եմ, որ Երևան քաղաքի Սիլիկյան թաղամասի Հին խճուղի հ.60/1 հասցեի հարևանությամբ գտնվող հողամասի վերաբերյալ Երևանի քաղաքապետարանն իր լիազորությունների սահմաններում կատարել է անհրաժեշտ գործողություններ՝ մասնավորապես կազմվել է վարչական իրավախախտման հայտնաբերման վերաբերյալ արձանագրություն, հարուցվել է վարչական վարույթ, սակայն վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննության փուլում թիվ ՎԴ/5941/05/21 վարչական գործով ՀՀ վարչական դատարանի կողմից 28.07.2021 թվականին կիրառվել է հայցի ապահովում՝ արգելելով քանդել կամ ապամոնտաժել քննարկվող հողամասում գտնվող շինությունը, այնուհետև, կիրառված հայցի ապահովումը վերացնելու նպատակով Երևանի քաղաքապետարանի կողմից ներկայացվել է միջնորդություն, որով հղում է կատարվել «Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմին» ՓԲ ընկերության 22.07.2021 թվականի հ.8/043 փորձագիտական եզրակացությանն առ այն, որ հայցի ապահովումը վերացնելու անհրաժեշտությունը պատճառաբանվում է նաև այն հանգամանքով, որ հողամասում կատարվող աշխատանքների հետևանքով արձակվող ձայնը գերազանցում է թույլատրելի մակարդակը և վտանգում շրջապատի բնակելի տների բնակիչների առողջությունը:

Դատարանը քննելով ներկայացված միջնորդությունը և, որպես ապացույց, գնահատելով նշված եզրակացությունը, 07.10.2021 թվականի որոշմամբ Երևանի քաղաքապետարանի միջնորդությունը մերժել է, որի դեմ Երևանի քաղաքապետարանի կողմից բերվել է վերաքննիչ բողոք:

Սույն գրությունը կազմելու պահին դեռևս ընդունված չէ վերաբերելի դատական ակտ, որպիսի պայմաններում Երևանի քաղաքապետարանի կողմից դեռևս չեն կարող իրականացվել ինքնակամ կառույցի քանդմանն ուղղված գործողություններ:

Ինչ վերաբերում է ինքնակամ կառույցի շահագործման վերաբերյալ հարցադրմանն, ապա տեղեկացնում եմ, որ տեղական ինքնակառավարման մարմիններին օրենքով կամ այլ նորմատիվ իրավական ակտերով վերապահված չէ ինքնակամ կառույցի շահագործման դադարեցմանն ուղղված միջամտող վարչական ակտի ընդունման լիազորություն:

ՀՀ վերաքննիչ դատարանի կողմից հայցի ապահովումը վերացնելու վերաբերյալ ակտի ընդունման և դրա անբողոքարկելի դառնալու պարագայում ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի հետևողականությամբ Երևանի քաղաքապետարանի համապատասխան կառուցվածքային ստորաբաժանումների կողմից կիրականացվեն օրենքով սահմանված կարգով խնդրի լուծմանն ուղղված անհրաժեշտ գործողություններ: